Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

ք.Երևան 22.11.2011թ.

Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասին

2011 թվականի նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների հանձնաժողովի նիստը, հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա. Օրբելյան,

հանձնաժողովի անդամներ՝

1. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Նունե Խաչատրյան,

2. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյան,

3. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարների և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ Դ. Մխեյան,

4. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Մ. Մանուկյան,

5. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Հարությունյան,

մասնակցությամբ հանձնաժողովի քարտուղարի՝ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարների և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Պետրոսյանի:

Հարգելի պատճառով բացակայում էին հանձնաժողովի անդամներ՝ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Մ. Ասլանյանը և Գավառ նոտարական տարածքի նոտար Տ. Գրիգորյանը:

Ա. Պետրոսյանի կողմից հանձնաժողովի նիստի ընթացքում ներկայացվել է զեկույց նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցներից ստացված 80 դիմումների կապակցությամբ, որոնցից դիմորդ Ալմաստ Մանուկյանի դիմումը ետ է վերադարձվել մասնագիտական աշխատանքային ստա-

ժը՝ նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննություններին մասնակցելու պահանջին չհամապատասխանելու պատճառով, իսկ դիմորդ Հասմիկ Հովսեփյանին որոշվել է թույլ տալ մասնակցել քննությանը՝ հետագայում աշխատանքային ստաժի հետ կապված հարցում կատարելու պայմանով:

Քննարկվեցին նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարցեր և հանձնաժողովի կողմից միաձայն ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցների որոշ դիպլոմների իսկության հետ կապված ճշտումներ կատարելու նպատակով համապատասխան հարցումներ ուղարկել ՀՀ կրթության և գիտության նախարարություն.
2. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննության ընթացքում քննասենյակից, դուրս եկող թեկնածուի աշխատանքը՝ անկախ պատճառից, համարվում է ավարտված:
3. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցների՝ քննության արդյունքերի հետ կապված բողոքները կարող են ներկայացվել արդյունքների հրապարակման պահից մեկ ժամվա ընթացքում (արդյունքները հրապարակված են համարվում ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքի առաջին հարկում փակցնելու պահից), դրանք հրապարակվում են նաև www.moj.am կայքում,
4. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների առաջին փուլը հաղթահարած բոլոր մասնակիցների անձնական փաստաթղթերը պետք է ենթարկվեն լիարժեք ստուգման հետագայում.
5. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցներին համապատասխանաբար բաժանել երեք խմբերի՝ <<ա>>, <<բ>> և <<գ>>.
6. Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցների <<ա>> խմբի անդամները պետք է ներկայանան 2011 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 9.30-ին, <<բ>> խմբինը՝ 12.30-ին,

<<գ>> խմբինը՝ 15.30-ին: Թեկնածուները պետք է ներկայանան անձնագրերով.

7. ՀՀ Կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 29-ի թիվ 1463-Ն որոշման 20-րդ կետի համաձայն՝ նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների մասնակիցներին արգելվում է քննասենյակ ներս բերել և օգտվել տպագիր և ձեռագիր նյութերից, տեխնիկայի, հեռահաղորդակցության միջոցներից: Սույն պահանջի խախտման դեպքում խախտում թույլ տված դիմորդը հեռացվում է քննասենյակից:
8. Արգելել դիտորդական խմբի անդամներին կամ լրագրողներին միջամտելու քննությանը: Քննության կազմակերպման կամ անցկացման կարգի հետ կապված խախտումներ հայտնաբերելիս անհրաժեշտ է այդ մասին առանց քննության ընթացքը խանգարելու հայտնել հանձնաժողովին.
9. Քննության ընթացքին հետևել ցանկացողները հավատարմագրվելու համար պետք է պարզ գրավոր ձևով դիմեն aram.petrosyan@moj.am էլեկտրոնային հասցեով: Դիմումում պետք է ներկայացվի դիտորդների անուն-ազգանունը, կազմակերպությունը, որը ներկայացնում են (եթե այն գոյություն ունի) և անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Դիմումը պետք ներկայացնել մինչև սույն թվականի նոյեմբերի 25-ը, ժամը 17.00:

Ա. Օրբելյան

Ն. Խաչատրյան

Ն. Փանոսյան

Դ. Մխեյան

Մ. Մանուկյան

Հ. Հարությունյան

Ա. Պետրոսյան